Արամ Իսաբեկյանը վերընտրվել է - «Երկիր», 17.07.2013

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում տեղի է ունեցել խորհրդի նիստ, որը վարել է խորհրդի նախագահ Անելկա Գրիգորյանը: Խորհրդի 24 անդամներից նիստին ներկա են եղել 23-ը:

Նիստի օրակարգում ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի անցկացումն էր: Սահմանված ժամկետներում ինքնաառաջադրված միակ թեկնածուն նախորդ 5 տարիներին ռեկտորի պաշտոնը զբաղեցրած ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանն էր, ով ներկայացրել է ակադեմիայի զարգացման հնգամյա ծրագիրը:

Քննարկումից հետո, համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետի և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կանոնադրության, փակ գաղտնի քվեարկության արդյունքում 5 տարի ժամկետով միաձայն՝ 23 «կողմ» ձայնով, ակադեմիայի ռեկտոր է ընտրվել Արամ Իսաբեկյանը:

http://www.yerkir.am/news/view/53598.html